

ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Անժամօրութեան նեփեւանք.

Անօրինակ թշուառութիւնների ենթարկուած ու յովբեան համբերութեամբ սպառազինուած հայ ժողովուրդը իւր պատմական ողբերգութեան փորձութեան բաժակի մը ուրն է քամում այժմ:

Եւ այդ ծանր ժամին էլ նրա ցան ու ցրիւ եղած մնացորդների ժողովման, աւերակ օջախների շէնացման հարցն է բարձրանում, որով աւելի ևս շեշտւում է նրա այն եղակի տոկունութիւնը, որը հայի կրկին վերածնութեան ամենալաւ առհաւատչեան է:

Զարմանալի չէ, որ մեր հասարակական հիմնարկութիւններում, մամուլում համերաշխութեան կոչերն են աւելի ու աւելի ուժգին հնչում, վերաշինութեան յուսատու և շինարար գործը յաջողութեամբ գլուխ հանելու համար:

Համերաշխ աշխատակցութեան անհրաժեշտութիւնը մեզ ստիպում է ուշադրութեան առնելու և մէջ տեղից հեռացնելու այն պայմանները, որոնք մեր անտեղի միմեանց դէմ զինուելու, մեր առանց այն էլ թոյլ ոյժերը բաժան բաժան լինելու պատճառ են դարձել:

Համերաշխութիւնը իրական հետևանքներ կունենայ այն ժամանակ, երբ մենք մեր կեանքի պառակտման, մեր գործիչների և հասարակական մարմինների միմեանց դէմ լարուելու, միմեանց անտեղի վարկաբեկելու ու անուանարկելու պատճառները քննենք ու պարզենք:

Մեր կեանքի բազմաթիւ երևոյթների քննութիւնը ցոյց է տալիս, որ մեզանում հակառակութիւնները, հակամարտութիւնները մեծ մասամբ անհատական յարաբե-

րութիւնների, անձնական հակակրութիւնների և որ ամենից ցաւալին է եսական շահերի և ոչ սկզբունքի տարբերութիւնների հետեանքներ են:

Մի կողմ թողնելով այդ անպատուարեր խնդիրներին քննութիւնը՝ մենք ուզում ենք շեշտել մեր անհամերաշխութեան մի աւելի կարևոր, հասարակական բնոյթ ունեցող պատճառի վրայ, որը մեր, յատկապէս վերջին դարու, կեանքի մէջ շատ պարզ աչքի է ընկնում:

Այդ մեր կեանքը, մեր անցեալը, մեր պատմական հիմնարկութիւնները չճանաչելն է և մեր միմեանց փոխադարձաբար անծանօթ լինելն է:

Այս դժուարին, գերմարդկային ոյժ պահանջող ժամին անգամ մեր իրականութեան մէջ գործող բազմապիսի հիմնարկութիւնները միմեանց կեանքի, կազմակերպութեան, աշխատանքի անծանօթ են:

Եւ այդ անծանօթութեան հետեանքը ստեղծում է միմեանց խանգարող, միմեանց դէմ յաճախ ի գուր տեղը լարող մի դրութիւն, որի առաջն առնելու համար համագործակցութեան համագումարի կարիքն է առաջ գալիս:

Անծանօթութիւնը մարդկանց համար կամ սառնութեան, անտարբերութեան, վերջ ի վերջոյ ատելութեան աղբիւր է դառնում կամ չափազանց զնահատութեան, անհիմն ոգևորութեան և իր շտեմածին, չճանաչածին հերոսացնելու վտանգին է մատնում:

Երկու դրութիւնն էլ ծայրահեղութիւն են և բնականաբար գործին վտանգ բերող:

Եւ այդ դրութիւնը իշխողն է եղել մեր կեանքում ցայսօր, սկսած այն ժամից, երբ հասարակական կեանքի կարգաւորման համար հասարակական ոյժերն են հանդէս եկել:

Առնենք ուստահայ կեանքը ժթ. դարում և կտեսնենք, որ մեր հասարակական պայքարի, գժտութիւնների, միմեանց դէմ լարման ամենամեծ պատճառը միմեանց անծանօթ լինելն է եղել, իրարից հեռու, վտարուած ապրելն է եղել:

Այժմ մեր մամուլում աւելի քան պարզ շեշտուում է, որ մեր արիւնակից տաճկահայ եղբայրների անտանելի դրութիւնը թեթեւացնելու լաւ, պատուարեւր զգացումի հետեանքը դժբախտ հետեանքի է բերել մեզ մասամբ և այն պատճառով, որ ուսանայ աշխատաւորները անծանօթ են եղել սահմանից այն կողմն ապրող ժողովրդի դրութեանը:

Աւելի շատ վէպերից, գրքերից տեղեկութիւններ քաղելով մեզանում ումանք «երկրի» ժողովրդին հերոսացրել են՝ դժոխքում ապրելու տոկոնութիւնն ունենալու առաքիտութիւնը վերագրելով, միւսներն էլ հակառակ ծայրահեղութեան մէջ են ընկել—նրա կեանքը դրախտ համարելով, նրա դրութիւնը աւելի քան բարեկեցիկ:

Եւ այդ երկու ծայրահեղութիւններն էլ այդ ժողովրդի իրական դրութեանը անծանօթ լինելու հետեանքն է, որն այժմ կիսահիասթափութեան է բերել բոլորին էլ:

Նմանօրինակ երևոյթը ուսւ ժողովրդի 70-ական թուականների «դէպի ժողովուրդը» նշանաբանով վարուողների մէջ ևս գոյութիւն է ունեցել, որոնք նոյնպէս հիասթափութեան են հասել, թէև ոչ այսպիսի ծանր զոհաբերութիւններով:

Նոյն վտանգալի անծանօթութեան հետեանք է և մեր հասարակական հիմնարկութիւնների, ղեկավար-գործիչների երբեմն ատելութեան հասնող անբարեացակամութիւնը դէպի Մայր Աթոռ, ս. էջմիածինը և նրան ենթակայ հիմնարկութիւնները:

Այդ անբարեացակամութիւնը մի դարուց աւելի գոյութիւն ունի և պատճառ է դարձել շատ ու շատ լաւ արժէքների, գնահատելի մեծութիւնների նսեմացման, թուլացման, մինչդեռ այդ ամենը չէր լինի, եթէ մեր կեանքի կանոնաւորման պահանջն ազնւօրէն ցանկացողները ի մօտոյ ծանօթանային, ուսումնասիրէին Մայր Աթոռը, սրտացաւ, բարեացակամ վերաբերմունք ունենային դէպի այն սրբութիւնը, որի բարգաւաճման նախանձախնդիր էին ցոյց տալիս իրենց:

Դժբախտաբար Մայր Աթոռի վերաբերմամբ վտանգաւոր, յաճախ անպատուարեր ընթացք բռնողները միշտ էլ նրանից հեռու են եղել, նրա իրական դրութեանը, նրա մէջ աշխատողներին անծանօթ:

Մոսկուայում, ապա թէ Թիֆլիսում հաստատուելով մեր հրապարակախօս, մամուլի աշխատաւոր, գրող գործիչները երբէք անհրաժեշտ չեն համարել ի մօտոյ ծանօթանալու, ուսումնասիրելու այն մեծ, սրբազան հիմնարկութիւնը, որը հայ ժողովրդին դարեր շարունակ կապել, միացրել է, որը հայի հաւաքման կենդրոնն է եղել, Լուսաւորչի կանթեղի, հրաշալի ու խորհրդաւոր նշանաբանն է հիւսել:

Հեռուանց հեռու մարդիկ այս ու այն պատահական երևոյթը տեսնելով, այս ու այն անհատ եկեղեցականին հանդիպելով, որ եւ մասնաւոր դէպքը իրենց ճանաչողութեան աղբիւրն են դարձրել ու ուռցրել մեծացրել և փոխանակ երևոյթի բուն պատճառը քննելու, ամբողջ հիմնարկութեան են պատասխանատու ճանաչել, նրան վարկաբեկել, առանց հասկանալու, որ այդ ուղին դէպի կործանում և ոչ դէպի վերածնութիւն է տանում:

Եւ դժբախտաբար այդ վտանգաւոր ընթացքը մի դար տեսելուց յետոյ իր պտուղները այժմ երևան է բերում:

Անծանօթութեան հետեանքը այժմ երևան է գալիս ցաւոտ արտայայտութիւններով և հէնց աւանդաբար այդ ուղղութեամբ աշխատելու վարժուածները այսօր իրենք են խոստովանում, որ մեր անցեալը, մեր կեանքը, մեր հաստատութիւնները նրանց համար անյայտ աշխարհ է եղել, որին նրանք մութ գոյներով են պատկերացրել, որին նրանք նզովք են կարգացել, որը ժողովրդի դժբախտութեան աղբիւրն են համարել, մինչ դեռ այժմ տեսնում են, որ այդ անցեալով կարող են հպարտանալ, որ այդ անցեալն է իրենց պահել, որ այդ անցեալն է այժմ իրենց կուլտուրական ազգերի շարքը դասել տալիս:

Հայ եկեղեցին է եղել մեր անցեալի միակ կենդրոնական հիմնարկութիւնը, նրա շուրջն է համախմբուել հայը

այդ մեծ, սրբավայր հիմնարկութեան մէջ է ծնունդ առել, ուռճացել հայի միտքը իւր բազմազան կողմերով:

Եւ մինչդեռ մեր հայ գործիչները շնորհիւ իրենց պատիւ չբերող անձանօթութեան այդ մեծ հիմնարկութեանը և գործիչներին վարկաբեկել են, հայ վանքերը քանդած և նրանց փոխարէն բերդեր շինած են ուղեցել տեսնել, հայ հոգևորականութեանը առանց խտրութեան անվերջ վատաբանել են, այսօր օտարը, հիւսիսից եկածը մեր գործիչների աչքն է բանում, միջնադարի երգիչների գովքն է անում, մեր խաւար կարծուած անցեալը մեզ պատիւ բերող, մեր գոյութիւնը իբրև կուլտուրական ժողովուրդ արդարացնող է ցոյց տալիս:

Եւ մերոնք, երևի թէ ամօթահար եղած, օտարի միջոցով ծանօթանում են մեր կեանքի հետ ու ծափահարում, ոգևորւում: Եւ մեր և կեղեցին ու եկեղեցականներին տարիներ շարունակ յախուռն ձևով քննադատողը, վարկաբեկողը, այսօր Շնորհալու «Առաւօտ լուսոյ»-ի գովքն է անում, Թլկուրանցու, Ախթամարցու, Նարեկացու գոհարներով է պարծենում. այն անձանց, որոնք հայ եկեղեցու զաւակներն են, որոնք սև սքեմ հագած հայ վանքում են իրենց կեանքը մաշել, ժողովրդի տառապանքը խորապէս զգացել ու աշխատել են թեթևացնել:

Այսքան ակնյայտ իրենց անձանօթութեան դժբախտ հետևանքները տեսնող մեր մամուլի աշխատաւորները դժբախտաբար այժմ էլ դեռ շարունակում են իրենց հին գործելակերպը: Այժմ էլ դեռ մամուլում յաճախ այս ու այն պատահական անձը, գրիչ շարժելու կարողութիւնն ունեցողը անվայել ածականներով է համեմում իր ընդհանուր խօսքերով ի երկտող թղթակցութիւնը և խրատներ է կարդում Մայր Աթոռին: Բայց շատ լաւ յայտնի է, որ այդ գրողները, այդպիսի վերաբերմունք ունեցողները անձանօթ են Մայր Աթոռին, նրա կեանքին, նրա աշխատաւորներին, նրա դրութեանն ու պայմաններին:

Քննադատելու այդ վտանգաւոր ճամբան ամենից դիւրինն է, հասարակական կեանքի բոլոր պակասաւոր երևոյթների համար միշտ մի պատասխանատու գտնելը ամենից

հեշտ միջոցն է իր վրայից յանցանքի ծանրութիւնը գցելու։
Բաւական չէ, որքան այդ անծանօթութիւնը մեր
կեանքը տակն ու վրայ արաւ, մեր կեանքի գործօն ոյժերը
ցրուեց, բաժան բաժան արեց։

Բաւական չէ, որքան զոհեր տուինք նիւթական և
մանաւանդ բարոյական շնորհիւ այդ անծանօթութեան։
Ժողովրդի անունից խօսող-գործել ցանկացողները վերջա-
պէս պարտաւոր են զգալ իրենց անպատասխանատու գոր-
ծունէութեան վտանգաւոր լինելը։ Մանաւանդ այժմ, երբ
համագործակցութեան պահանջը հրամայական է դարձել,
ամենից առաջ անհրաժեշտ է միմեանց մօտիկից ճանաչել,
մի կողմ թողնել այն չարիքներով հարուստ սառնութիւնը,
որ մի դարուց աւելի է արհեստականօրէն ստեղծել են
Մայր Աթոռի և հասարակական գործիչների, մամուլի մէջ։

Մայր Աթոռի դռները միշտ էլ ժողովրդի զաւակների
առաջ բաց են եղել և կմնան այդպէս։

Ժողովրդին անկեղծ ծառայել ցանկացողները պարտա-
ւոր են գալ մտնել, ծանօթանալ, տեսնել իրական դրու-
թիւնը, ուսումնասիրել նրա պայմանները և այն ժամանակ
կհամոզուեն անշուշտ, որ իրենք իրօք թիւրիմացութեամբ
յարձակւում են, որ, յիրաւի, իրենք անտեղի մեղադրանքներ
են կարդում, շնորհիւ միմիայն իրենց անծանօթութեան։

Մայր Աթոռը իր ժողովրդի հարազատ մայրն է եղել
ու կմնայ և նա եթէ այս ու այն անհրաժեշտ գործը եր-
բեմն չի կատարում, այդ իրենից անկախ պատճառներով
յաճախ, որովհետեւ աշխատաւոր չկար։

Անծանօթութիւնը մեր կեանքի դժբախտութիւնների
մեծ պատճառներից մէկն է և պարտաւոր ենք յանուն մեր
ժողովրդի վերածնութեան, մեր կեանքի բարդաւաճման
միանգամայն վերացնել այդ պատճառը, մօտենալ միմեանց,
ի մօտոյ ծանօթանալ և անտեղի քննադատութիւնների փո-
խարէն սրտացաւ աջակցութիւն ցոյց տալ։

Այդ ժամանակ, իրօք, մեր կեանքը շատ ու շատ դժ-
բախտութիւններից, չարիքներից կմաքրուի։

Այդ ձևով, յիրաւի, մենք մեր առաջ դրուած դժուար,
պատասխանատու աշխատանքն ոյժ կունենանք պատուով
կատարելու։

Գիւս արեղայ.